ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2025 թվականի թիվ 104-Լ

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 32-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 08-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 3-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կառուցվածքը հաստատելու և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 18-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 97-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 19-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 32-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշմամբ հաստատված Հավելվածի 20-րդ կետի 1-ին ենթակետի 1.1 պարբերությունը լրացնել

«Տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժին.» բառերով:

2. Որոշմամբ հաստատված Հավելվածը լրացնել 45.1 կետով և շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«45.1 Տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժին՝

1) կազմում (մշակում) է Հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանությունը.

2) վերլուծում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունը.

3) նախագծում, կազմակերպում և վերահսկում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից մեդիա ոլորտի վիճակագրական աշխատանքների իրականացումը.

4) դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության հիման վրա վերլուծում է օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունները.

5) իրականացնում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծություն.

6) իրականացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության վիճակագրության վարումը.

7) պատրաստում և կատարելագործում է Հանձնաժողովի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից վիճակագրական տվյալների ստացման վերաբերյալ հարցաշարերը.

8) ներկայացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների վերաբերյալ վերլուծական տվյալների հաշվետվությունը.

9) ներկայացնում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների բարելավման առաջարկություններ՝ հիմք ընդունելով հավաքագրված վիճակագրական տվյալները.

10) ապահովում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը տեսալսողական ոլորտի քաղաքականության մշակման համար.

11) իրականացնում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրության պատշաճ կատարման խոչընդոտների վերհանման աշխատանքները և ներկայացնում լուծման առաջարկներ.

12) ուսումնասիրում է տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձը և ներկայացնում է համապատասխան առաջարկներ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքների բարելավման նպատակով.

13) վարում է տեսալսողական մեդիա ոլորտին վերաբերող օգտակար հղումների, հրապարակումների, գրքերի, գիտական աշխատությունների շտեմարան:»

3. Որոշմամբ հաստատված Հավելվածի 53-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. օգոստոսի 28
ք. Երևան